ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ:

Բացակա էր՝ Հասան Ալոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Սլավիկ Սալոյան, Միեր Մարտիրոսյան, Քրիստինե Դարբինյան, Ռոստամ Բաքոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդիկ Օսեյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Քրիստինե Դարբինյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 6-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 6-րդ արտահերթ նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 27-Ն որոշմամբ հաստատված տարեկան բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային հատկացումներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրի ջրատարի կառուցման աշխատանքների ծրագրային հայտին համաձայնություն տալու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի տեղական բյուջեի պահուստային ֆոնդից ծախս կատարելու մասին:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 27-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԼԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի <<Թլիկ բնակավայրի ջրատարի կառուցում>> սուբվենցիայի ծրագրային հայտը համաձայն հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԾԱԽՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 90-րդ հոդվածի 1-կետի դրույթներով և <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետով.

Արևուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Արևուտ համայնքի 2025 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից օրենսդիր և գործադիր մարմին բաժնի 4269 հոդվածին տրամադրել 500000/հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

Ավագանու անդամներ

ԹԵՆԳԻԶ ԱԼՈՅԱՆ

ՋԱԴԱ ԲԱՔՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻՏԱԼ ՕՍԵՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Քրիստինե Դարբինյանը

_____